



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ՄԵԾ ՊԱՅՈՑ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ  
 ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Տօնացոյցին համաձայն, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Յարութիւնը առաջող քառասնօրեայ ժամանակաշրջանը պահեցողութեան, աղօթքի, ինքնասրբագրութեան, հաւատքի վերանորոգութեան եւ հոգեւոր ուխտագնացութեան ընթացք է, Յուդայի անապատին մէջ մեր Տիրոջ՝ Յիսուսի քառասնօրեայ պահեցողութեան օրինակով: Եկեղեցին, Մեծ Պահոց այս ժամանակահատուածին, հաւատացեալներու հոգեւոր կեանքի շինութեան սատարող, պահքի, ապաշխարութեան եւ հոգեւոր կրթութեան առաջնորդելու նպատակաւ, Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերուն, հոգեպարար եօթը ժամերգութիւններէն յատկապէս Արեւագալի, Խաղաղական եւ Հանգստեան ժամերու արարողութիւններ կը կատարէ, հաւատացեալները հրաւիրելով հաւատքի, ներքին ուխտագնացութեան եւ աղօթանուէր վերանորոգեալ կեանքի:

Այս նպատակով, Թեմիս Բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Սրբ. Արք. Մարտիրոսեան, Մեծ Պահոց քառասնօրեայ շրջանին Արեւագալի եւ Հսկումի ժամերգութիւններուն հերթաբար կ'այցելէ ծխական եկեղեցիները, կը նախագահէ արարողութիւններուն եւ հոգեւոր իր պատգամը կու տայ հաւատացեալ մեր ժողովուրդին: Հոգեշնորհի Հայր Սուրբեր եւ Հոգեւոր Հովիւներ իրենց քարոզներով եւ հոգեւոր խորհրդածութիւններով կը քաջալերեն հաւատացեալները ապաշխար կեանք ապրելու եւ հաւատքի վերանորոգութեամբ արժանաւորապէս դիմաւորելու մեր Փրկչին հրաշափառ Յարութիւնը:

Միաժամանակ, տարուան ամբողջ ընթացքին, մեր հաւատացեալ ժողովուրդի ու յատկապէս երիտասարդութեան հոգեւոր դաստիարակութեան եւ արթնութեան սատարող Սուրբ Գրային դասընթացքներ եւ հոգեկրթիչ հաւաքներ կազմակերպուած են, առաջնորդութեամբ՝ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեանի եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեանի, եւ հերթաբար տեղի կ'ունենան ծխական մեր եկեղեցիներուն մէջ, հետեւեալ ժամանակացոյցով.-

- Երեքշաբթի, Կլենտլի Ս. Աստուածածին եկեղեցի, երեկոյեան ժամը 7:00-8:00, սուրբ գրային ժողովրդային հաւաքը կը վարէ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:
- Չորեքշաբթի, Լա Զրեսենթա Հովիտի Հայց. Առաքելական եկեղեցի, երեկոյեան ժամը 7:00-8:00, սուրբ գրային հաւաքը կը վարէ Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան:
- Չորեքշաբթի, երեկոյեան ժամը 7:00-8:00, Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցի, պատանեաց եւ երիտասարդաց սուրբ գրոց հաւաքը կ'առաջնորդէ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

- Հինգշաբթի, երեկոյեան ժամը 7:00-8:00, Հովիվուտի Ս. Կարապետ եկեղեցւոյ պատանեաց խումբի սուրբ գրոց հաւաքը կ'առաջնորդէ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

- Շաբաթ, յետ միջօրեի ժամը 5:00-7:00, Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ երիտասարդաց երկշաբաթեայ դրութեամբ սուրբ գրոց հաւաքը կ'առաջնորդեն Գերպ. Տ. Միւռն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան:

Առաջնորդութեամբ գլխաւորաբար Եղբ. Գրիգոր Սըրբլեանի եւ Հայց. Առաք. եկեղեցւոյ եկեղեցասէր Եղբայրակցութեան, սուրբ գրային սերտողութիւններ եւ աղօթքի պահեր տեղի կ'ունենան մեր Թեմի եկեղեցիներուն մէջ, հետեւեալ ժամանակացոյցով.-

- 1) Հովիվուտի Ս. Կարապետ Մայր եկեղեցի  
Չորեքշաբթի, երեկոյեան ժամը 7:00-8:30  
Հիգշաբթի, առաւօտեան ժամը 9:30-11:00
- 2) Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճար  
Երկուշաբթի, երեկոյեան ժամը 7:30-8:30  
Ուրբաթ, երեկոյեան ժամը 7:30-8:30
- 3) Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցի  
Չորեքշաբթի, երեկոյեան ժամը 7:00-8:30  
Հիգշաբթի, առաւօտեան ժամը 10:30-12:00  
Հիգշաբթի, կէսօրուան ժամը 12:30-2:00  
Ուրբաթ, առաւօտեան ժամը 9:30-11:00  
Շաբաթ, յետ միջօրեի ժամը 3:00-4:00
- 4) Հովիտի Ս. Նահատակաց եկեղեցի  
Երեքշաբթի, երեկոյեան ժամը 7:30-8:30
- 5) Օրէնճ Քառնթի Քառասնից Մանկաց  
Երկուշաբթի, երեկոյեան ժամը 7:30-8:30  
Երեքշաբթի, առաւօտեան ժամը 10:30-12:00
- 6) Փասատինայի Ս. Սարգիս եկեղեցի  
Հիգշաբթի, երեկոյեան ժամը 7:30-8:30

### **ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ**

Եկեղեցւոյ մը առաքելութիւնը ծիրին մէջ է ո՛չ միայն հոգեւոր սնունդ մատակարարել անոնց, որոնք եկեղեցի կը յաճախեն, այլ նաեւ անոնց՝ որոնք կեանքի այս եւ այն պատճառներով հեռու մնացած են Աստուծոյ սէրէն եւ ինկած՝ բանտերու դժբախտ խուցերուն մէջ:

Յիսուս ինք եկաւ որպէս Լոյս աշխարհի եւ ուզեց մարդիկը դուրս բերել իրենց խաւարային վիճակէն, եւ ազատութիւն շնորհել բոլոր բանտարկուած հոգիներուն, յատկապէս անոնց՝ որոնք մեղքին կողմէ կապուած ու բանտարկուած են, եւ չեն կրնար Տիրոջ քաղցր ներկայութիւնը վայելել: Յիսուս ինք եկեղեցւոյ առաքելութեան վերածեց ո՛չ միայն որբերու խնամքը, անօթիին՝ կերակրելը, ծարաւածին՝ յագեցնելը, մերկին՝ հագուեցնելը, հիւանդին՝ կարեկցիլը, այլ նաեւ բանտարկեալին այցելութիւն տալը (Մտ 25.35-36), զինք առաջնորդելու՝ ի խաւարէ ի լոյս,

յանգիտութենէ ի գիտութիւն, մեղքի գերութենէն յաստուածպաշտութիւն եւ ի հոգեւոր ազատութիւն:

Առ այդ, բարձր տնօրինումովը Թեմիս Առաջնորդ Սրբազան Զօր, տարիներէ ի վեր կանոնաւոր կերպով հոգեւոր սնունդ կը մատակարարուի Լոս Անճելըս շրջանի հայ բանտարկեալներուն:

Մեր Թեմին անունով եւ պետական ճանաչողութեամբ բանտարկեալներու հոգեւոր մատակարարման հայկական յատուկ բաժանմունքի գլխաւոր խորհրդատու նշանակուած է Թեմիս զաւակներէն՝ բարեշնորհ Ռաֆֆի Սարկաւազ Կարապետեան: Սոյն աշխատանքին համար հոգեւոր մատակարար նշանակուած են նաեւ Ազգ. Առաջնորդարանի Քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Զոզ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, որ ամէն Շաբաթ օր կ'այցելէ Magic Mountain-ի Way Side Super Max NCCF բանտը, եւ Ս. Խաչ Սայր Տաճարի հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Աշոտ Քիւյ. Գամպուրեան, որ ամէն Երկուշաբթի կ'այցելէ Down Town-ի Twin Towers բանտը:

## **WESTERN PRELACY LENTEN SERVICES AND BIBLE STUDY**

The forty days of Lent preceding the Glorious Resurrection of our Lord Jesus Christ is a time of prayer, introspection, and spiritual renewal and growth. During this period, sunrise and evening services are offered in all Prelacy Churches on Wednesdays and Fridays.

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, has been presiding over services regularly at our Prelacy churches and offering his spiritual messages to our faithful, encouraging them to live repentantly and prepare for the feast of the Glorious Resurrection of Christ with renewed faith.

Throughout the rest of the year, spiritual guidance is offered to our faithful and especially to our youth through Bible studies and spiritual gatherings under the direction of Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian, co-chairs of the Religious Education Department, with the following schedule;

- Tuesdays: St. Mary's Church in Glendale from 7-8 p.m. by Hayr Barthev
- Wednesdays: Crescenta Valley parish from 7-8 p.m. by Hayr Muron
- Wednesdays: St. Sarkis Church in Pasadena from 7-8 p.m. by Hayr Barthev (Youth Gathering)
- Thursdays: St. Garabed Church in Hollywood from 7-8 p.m., by Hayr Barthev (Youth Bible Study)
- Saturdays (twice a month): St. Mary's Church, from 5-7 p.m. Hayr Barthev and Hayr Muron (Youth Bible Study)

Bible studies are also conducted regularly by Mr. Krikor Misserlian and the Armenian Ecclesiastical Brotherhood, at St. Garabed Church, St. Mary's Church, Holy Cross Cathedral in Montebello, Holy Martyrs Church in Encino, and Forty Martyrs Church in Orange County. The schedule is as follows:

- St. Garabed: Wednesdays 7-8:30 p.m., Thursdays 9:30-11:00 a.m.
- Holy Cross: Mondays 7:30-8:30 p.m., Fridays 7:30-8:30 p.m.
- St. Mary's: Wednesdays 7-8:30 p.m., Thursdays 10:30a.m.-12:00 p.m., Thursdays 12:30-2:00 p.m., Fridays 9:30-11:00 a.m., Saturdays 3:00-4:00 p.m.
- Holy Martyrs: Tuesdays 7:30-8:30 p.m.
- Forty Martyrs: Mondays 7:30-8:30 p.m., Tuesdays 10:30 a.m.-12:00 p.m.
- St. Sarkis: Thursdays 7:30-8:30 p.m.

By the ordinance of the Prelate, spiritual guidance also continues to be offered to Armenian inmates in the Los Angeles area under the supervision of Chaplain Raffi Garabedian. In addition, Very Rev. Fr. Barthev Gulumian visits the North County Correctional Facility in Valencia every Saturday while Rev. Ashod Kambourian, Pastor of Holy Cross Cathedral in Montebello, visits inmates at the Twin Towers prison in Downtown every Monday.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org), Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.